

ԲԱԺԱՆՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Նշարից հետո
Տարեկան 10 Ձր.
Վեցամսեայ 5 " "
Երեսամսեակի հա-
մար տարեկան 12 " "
Վեցամսեայ 6 " "
ԿԱՆԻՍԻԿ ՎՃԱՐՆԻՒ
—)(—
Երոթիմեմ հս չնն զույր
—)(—
Ծանուցանելու տպը 20 սան-
րիմ է. Երեկին առ ի սն-
դաններու համար 20 ՈՊ
գեղջ կրուայ :

ՇԱՐՋՈՒՄ

Վեց ցրաւ որկեյ
քնակս հաւցեմե

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.
Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)

R. P. Kalémkarian
(Auteur) M. Mihailovitch
M. Stangasse W. 4
Vienne

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿՐ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ ԶՈՐԵՔՆԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ԹՐԵՐԸ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՀԱՍՏԱՆԱՆՍՈՒ Ք. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

ՍԵՐ ԲԱԺԱՆՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Ներկայ թիւով «Նարժում» կը թնուակոխէ իր գոյութեան երկրորդ շրջանը: Որովհետեւ պէտք է շատով մեր նախորդ ատարան հաշիւները վազեցնել, վերջին անգամ կը խնդրենք մեր Պուլխարիոյ և արտասահմանի արդոյ բաժանորդներէն որ անյապազ իրենց անվճար բաժնեկիցիները մեզ հասցնեն: Դեռ անոնք որ չեն ուզեր շարունակել, թող հաճին անվճար պէտք ետ դարձնել թերթերը: Երրորդ թիւէն վերջ ետ չի գարձնող անձերը բաժանորդ կը նկատուին:

ՀԱՍՏԵՍ ԳՈՐԾԵՐ

Մեր մէջ զարգացումը տէր է զող կամ սեպուղ զատակարգ մը կայ, որ քիչ մը չափէն աւելի երեւակայական կամ վերացական կեանքով մը կ'ապրի:

Ասանք՝ իրենց ազգին օգտակար ըլլալու անկեղծ վախճակ մը ունին, և իրապէս այլ, ընդարձակ, ամբողջ հայրութիւնը ընդգրկող ծրագրերն կը մշակեն, զազափարներ կը յղանան, և մտադրութիւններ կը սնուցանեն որոնք շատ մեծ, շատ վեճ, և շատ ալ հրապուրիչ են:

Ամէն անգ և ամէն ատեն կարելի է հանդիպել սասնց, որոնք խորհրդարաններու և ժողովապետներու մէջ և կամ սրճարաններու անկիւնը, շարունակ կը ճառատեն, կը շափեն, կը ձեւեն միախառնելու շարք մը ապշեցըներով:

Պախարակելի ոչինչ կայ ասոր մէջ, և նոյն իսկ Եթէ ուզեն, ասանք առանց մէկու մը վրաս հասցնելու կրնան իրենց ծրագրերն բիչ մը աւելի ընդլայնել և ամբողջ մարդկութեան վրայ տարածել:

Բայց աս մտածուած մեծ գործունէութիւններուն, հեռուոր խեղճութեան քովի կը. անոնց հաւատար օգտակար, բայց համեստ գործեր ալ կան, և որոնք

շատ անգամ ուշադրութենէ կը վրիպին:

Այսօր արտասահմանի հայաշատ հեղբոններու մէջ ունինք վարժարաններ, ընթերցարաններ, լսարաններ, թատրոններ ու թերթեր, կամ չի գտնուած եղբ շատ զգալի են անոնց պէտքը:

Ի՞նչ կընեն մեր այս մեծ իսկախանները, մինչեւ որ աստիճան կը հետաքրքրուին այս համեստ հաստատութիւններով, իրենք որ ինքզինքնին պատրաստ կը զգան լայն գործունէութիւններու:

Գծախտարար կամ իրենց ծրագրիներու խորը թաղուած բոլորովին կանտեսեն իրենց շտաբը գտնուածները, և կամ իրենց առաջին քայլերուն մէջ տեսած պղտիկ արգելքէ մը կուժաստատին, և կրած թեթեւ զրկանքէ մը գտնանալով բոլորովին ետ կը քաշուին:

Սանդուխի մը վերի ծայրը հասնելու համար, անհրաժեշտ է ստորին աստիճաններէն անցնիլ, և մարաջախտի մը գուռազանք ձեռք բերելու համար պէտք է պարզ գիտութիւն մը մտխաղը կրել, և Եթէ իրապէս կը փախագրենք որ մը մեծ գործով մը զմեզ փառատորուած և օգտակար դարձած տեսնել, պարտաւոր ենք նախապէս քիչ մը համեստ ըլլալ և մեր համեստ գործերը կարգի բերել:

Ի՞նչ օգոտ ընդհանուր մարդկութիւնը վերանորոգող դրուածքներ մը վրայ որոճալ, երբ բան մը չենք ընել, սեանելու, հասկնալու և բարելաւելու համար մեր շտաբը և ուսուցող մարդոց կեանքը:

Ի՞նչ արգիւնք կրնայ սպասուիլ յայտարարելով թէ. «Հայրութիւնը կրնայ փրկուիլ գիտակից յեղափոխութիւնով մը միայն», եւ երեւի վրայ կը ձգենք մեր վարժարանները, և կը թողունք որ անհոգ ապրկար ձեռքերու մէջ շարունակեն սոցալոգիաները մնալ նորածիլ սերնդին:

Ո՞վ պիտի տարածէ ժողովրդին մէջ առողջ զազափարներ,

և ո՞վ պիտի արթնցնէ անոր դիտակցութիւնը, երբ զարգացեալները ուժ չի տան ընթերցարանին, լսարանին, թատրոններուն և թերթին:

Եթէ պղտիկ արգելք մը զմեզ կը վհատեցնէ, փոքրիկ զրկանք մը զմեզ կը թունաւորէ այնքան որ այսօրուան մեր սկսած գործին անհաշտ հակառակորդները կը դառնանք վաղը. ի՞նչ պիտի ըլլայ մեր վիճակը երբ աւելի ընդարձակ ապարդիւ մը մէջ աւելի մեծ խոչնդոտի մը և կամ զրկանքի մը հանդիպինք:

Ունենանք մեր մեծ երազները, սակայն ատ փայլուն ապագային պատրաստուելու համար, հիմակուան մեր ուժերը կը թնկնք համեստ բաց օգտակար գործերու մէջ, և ասով միայն կրնանք մեծութեան տանող ճամբուն վրայ գտնուիլ:

ՎԱՀԱՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԲԱՏԵՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

ՄԱԿԵՆՈՒԿԱՆ ՅԵՆ. ԳՕՄԹԵՐԻ Ի ՆԱՍՍ.

Մինչդեռ թուրքը, Մակեթունիոյ մէջ զգացուող աննորոտ գործունէութիւնէն սարսափահար, իր կատաղի զօրքերով ամբողջ երկիրը կը լեցնէ ու ուղղմային վիթխարի պատրաստութիւններ կը տեսնէ սահմանազխիւն վրայ, պուլխար և մակեթոնացի ժողովուրդը կաշխատի փոխադարձաբար ամէն կարելի միջոց հայթայթել, երկիրն քրիստոնեայ տարրը զինելու համար: Հանգանակութիւն, նուիրատուութիւն, երկկողմ անդադար կը սարքուին այդ նպատակու, և ժողովուրդը ամէն կերպով կը քաջալերէ զանոնք:

Այս կարգի երեկոյթ մը վայելելու բարեբախտութիւնն ունեցան Վառնացիք անցեալ շաբաթ գիշեր: Անկէկ Սլաւօֆի սրահին մէջ ինպատու մակ. յեղ. գօմիթիւն ներկայացուցող «Իրիսթօ Պօթէվ» թատերադրութիւնը Սրահը երկսեւ խոռոն բազմութեամբ

լեցուած էր, այնպէս որ շատեր ստորագրեցան ոտքի վրայ կամ դուրսը մնալ, իսկ հարիւրաւոր անձեր ալ, որոնք կանխապէս տոմսակները գնած էին, բոլորովին անզ չի գտնելով, ետ դառնալ պարտաւորեցան:

«Իրիսթօ Պօթէվ»-ի անունը արդէն ծանօթ է ամենուր Պուլխարական ազատութեան ամենամեծ ախոյեանը եղաւ ան, և միանգամայն Պուլխարիոյ ամենէն խանդավառ բանաստեղծը: Իր գործունէութիւնը յեղ. ապարդիւն մէջ շատ կարճ տեւեց. առաջին կուռի զորպուլխար հայրուկները մղեցին Ձէրքեղ վաշտերու դէմ, Պօթէվ ինկաւ մահացու կերպով վիրաւորուած: Իր մահը սակայն աւելի ոգեւորեց պուլխար հայրուկները, և իր յեղափոխական կրակոտ բանաստեղծութիւնները ժողովրդին բերնին մէջ երգուելով, վառ պահեցին անոր մէջ ազատութեան ձգտումն ու կուռի ետանդը:

Թատերադրութիւնը երկու արարուածէ կը բաղկանայ: Առաջին արարուածին մէջ պուլխար հայրուկային խումբ մը, Պօթէվի առաջնորդութեամբ, Դանուբի ումանական նաահանդստէ մը զաղտնիաստրիական «Ռատէձքի» նաւը կը բարձրանայ, երբ «Ռատէձքի» եզերքէն կը հեռանայ, հայրուկները պատգամաւորութիւն մը կուղարկեն նաւապետին պահանջելով որ նաւը իրենց յանձնուի: Նաւապետը կընդդիմանայ. հայրուկները կը բանտարկեն զայն, նաւին ղեկավարութիւնը իրենք ստանձնելով:

Նաւը կը շարունակէ իր ուղին Դանուբը ճեղքելով, Հայրուկները ուրախ, կերպէն Պօթէվի յօրինած բանաստեղծութիւնները: Առաջին արարուածը կը վերջանայ հայրուկներու որոտընդոստ երգերուն մէջ:

Երկրորդ արարուածը հայրուկային կուռի մը պատկերն է: Պօթէվի խումբը որոշեալ կէտին վրայ նաւը ուղղելէ ետք, ցամաք ելած է ապաստակութեանց սկսելու համար: Բայց տաճիկ կտտավարութիւնը լսած է արդէն Պօ-

Թէ՛վի արշաւանքին լուրը : Չէր-
քէզ կանոնաւոր զօրքերու շուկատ
մը կը զրկուի զանոնք հալածելու
համար : որոնք կը յաջողին խում-
բին հետքը գտնել : Հալածանքը
կը սկսի : յաջողական ընդհա-
րումներ տեղի կունենան : Պո-
թէ՛վի սակաւաթիւ խումբը եր-
գերով ու հուրաներով կատաղի
ընդդիմութեան մը կը սկսի : Չէր-
քէզ զօրքերը այս անակընկալ
դիմադրութեանն յանկարծակի
կուգան , կը շուարին , կը նա-
հանջեն ու խոյս կուտան : Բայց
շուտով նոր ընդհարում մը կը
սկսի , այս անգամ աւելի սաստիկ :
Պոթէ՛վի իր խումբին առջեւ ան-
ցած՝ կրակին մէջ կը նետուի :
Անվեհեր հայդուկները Պոթէ՛վի
օրինակէն խրախուսուելով՝ ա-
ռաջ կը նետուին , բայց թշնա-
միին բազմութիւնը կը յաղթէ
վերջապէս , Պոթէ՛վ կը պաշարուի
թշնամիի խումբէ մը և կը սպան-
նուի : Ողջ մնացած հայդուկները
լեռը կը քաշուին կուր շարու-
նակելու համար , Պոթէ՛վի սպան-
ման վրայ բոլորովին վրէժխրն-
դիր : Այս է թատերգութեան
նիւթը ամբողջովին , որ Պոթէ՛վի
կեանքին պատմութիւնն է միան-
գամայն :

«Խրիսթո-Պոթէ՛վ» թատերգու-
թիւնը , 1878ին , ազատութեան
յաջողօր օրն իսկ յօրինուած ու
ներկայացուած , գործն է Սլավիէ-
քով անուն պուլկար գրագէտի մը :
Նիւթը ամբողջովին յիշատիսա-
կան կեանքէ առնուած , ինքնին
ճոխ ու բազմերանգ է . բայց
պէտք է խոստովանել որ թատեր-
գութիւնը , իբր գեղարուեստա-
կան գործ , շատ անյաշող կերպով
յօրինուած էր : «Խրիսթո Պոթէ՛վի»
հեղինակը երբեք չէ կրցած ըմ-
բռնել ու պատկերացնել իր հե-
րոսին ձգտումներն ու անոր միշտ
ընցավառ ու վրէժխրդի սիրտը :
Տեսարանները շտապ ու անկէն-
զան են , դէպքերու հանդրոյց-

ները գրեթէ երբեք յարմարած
չեն : Պոթէ՛վը որ պուլկար յեղա-
փոխութեան կուտանն ու ոգեւո-
րիչ ուժն եղած է և որ պէտք էր
ամբողջ թատերգութեան հոգին
ըլլար , սովորական հայդուկի մը
պէս ներկայացուած է : Իր խօս-
քերը , իր խումբին ուղղած յոր-
գործները կամ ճառերը , թոյլ ,
տափակ ու սովորական բացա-
տրութիւններ են : Ամբողջ թատ-
երգութեան մէջ հազիւ մէկ եր-
կու անգամ խօսք կ'առնէ , և իր
արտայայտութիւնը երբեք տպա-
ւորութիւն չի թողուր հանդիսա-
տեսին վրայ :

Եւ սակայն ներկայացումը բա-
ւական յաջող էր : Ինքուանները
կարողացան հայդուկային կուրի
մը բոլոր ազգեցութիւնը թողուլ
ներկաներուն վրայ : Միայն Պո-
թէ՛վի գերը կատարողը շատ համ-
բակ կերեւէր իր արհեստին մէջ :
Իր շարժումները թոյլ ու իր ար-
տայայտութիւնը սեռակ մը յու-
սահատական ինքնալիկութիւն
բերելովն ունէին . կարծես թէ
Պոթէ՛վ իր հայրենիքին ազատու-
թեան սիրով չէ որ կը կուրի ,
այլ շխարհային վորձանքներու
տակ ընկճուած յուսախաբ յուե-
տեսի մը պէս , որ կուղէ վերջ
տալ կեանքին պատերազմի դաշ-
տին վրայ :

Ինչ որ ամենէն գրաւիչն ու ա-
մենէն յուզիչ և ազդողն էր այս
խաղին մէջ , հայդուկներու խան-
դավառ ոգեւորութիւնն էր , այն
հայդուկներուն՝ որոնք հայրե-
նիքի կրակով տոչորուն մահ-
ուան գիրկը կը նետուին գիտակ-
ցարար , գոհ սրտով ու կարծես
երջանիկ իրենց ախար բախ-
տէն :

Եւ իրաւունք ալ ունէին : Ազա-
տութեան կուրը կը շարունակ-
ուի . հայդուկները կը մեռնին ,
բայց վերջին յաւելուածական
տեսարանի մը մէջ , հայրենիքի
քաջերու այդ կոտորածին վրայ

կը բարձրանայ Պուլկարիոյ ան-
կախութեան հրեշտակը ցանկալի
աւետիսը բերելով պուլկար ժո-
ղովրդին : Թուրք վայրենի (ու-
ժանր սարսափահար եղած է . այդ-
կատաղի , դազանաբալոյ , ար-
խունուշտ հոգիները խզի խայթ
մը ունեցած են կարծես ու հիա-
սթափած , զգալով իրենց կոյր մո-
լեռանդութեան յափշտակութեան
մէջ կատարած հրէշային նախ-
ճիրներուն ազեւալի հետեւան-
քը . տխուր , յուսահատ , պար-
տաւորուած են համակերպիլ դի-
ցազնութեան յաղթանակին և խո-
նարհիլ ազատ Պուլկարիոյ դրօ-
շակին առջեւ :

Ահա այն բարոյական դասը որ ,
ամէն հաշիւներէ ետք , կրնան
քաղել ընկճուած ազգերը : Բո-
ղոքի ազադակը , որքան ալ ջա-
նան խեղդել , միշտ կը բարձրա-
նայ , աւելի բուռն ու հանդ որ-
քան ճնշումը վայրագ ու ահար-
կու է : Յաղթութեան դափնին ,
ուչ կամ կանուխ , կը պսակէ իղ-
ձերը , կիրողորմէ յոյսերը :

Հոգեկան այս տրամադրու-
թեան տակ մեկնեցան այն բոլոր
հայերը որոնք , իրենց երբեմնի
բազդակից ժողովրդի մը անց-
եալով հետաքրքրուած , երեկոյ-
թիւն ներկայ կը գտնուէին :
Պատմութեան դասը անհերքելի
փաստն է ամէն ճշմարտութեան ,
ու մեզի կը մնայ միայն օգտուիլ
այդ դասերէն :

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Փ. Պոլիս , 28 Յունիս .
Այսօր վաղամեռիկ իշխանու-
հիին թաղումի տխրալի հանգէսը
կատարուեցաւ ահագին բազմու-
թեամբ : Երկու օրերէ հետէ շր-
ջակայ գիւղերէն և քաղաքներէն
խուռն բազմութիւն կը հաւաք-
ուէր ներկայ ըլլալու այս սգալի
հանգէսին : Քաղաքապետութիւնը

մեծամեծ պատրաստութիւններ
տեսած էր : Քաղաքին ամէն կող-
մը սեւ դրօշակներ կը ծածանէին .
բայց կայարանէն մինչեւ լատին-
ներու եկեղեցին անհամար սեւ
դրօշակներէ զատ , մէկ քանի
տեղեր սեւերով ծածկուած կա-
մարներ շինուած էին : Ամբողջ
քաղաքը ոտքի վրայ էր առաւօ-
տէն հետէ :

Կէս օրէն յետոյ հասաւ մաս-
նաւոր կառախումբը , որ կը փո-
խադէր ողբացեալ իշխանուհիին
մարմինը : Փէվչէսքօ Տրուժէսթ-
վօյի անդամները , որոց մէջ կը
գտնուէին մէկ քանի հայերի ալ ,
երկու նուագախումբեր և լատին
քահանայներ կը մասնակցէին ա-
րարողութեան : Բազմութիւ պսակ-
ներ եկած էին , որոց մէջ էին
նաև Պուլկարիոյ հայ հասարա-
կութեան ընծայածները , մին
արծաթապատ արհեստական , իսկ
միւսը իրական ծաղիկներէ :

Մեռելակիր կառքին կը հետե-
ւէին իշխանը , իր եղբայրը , նա-
խարարներէն Տիարք Կրէթօֆ և
Ռատօսլավօֆ , կառավարութեանց
ներկայացուցիչները , համարա-
կութեանց պատգամաւորները , ո-
րոցմէ էին նաև երկու հայ վա-
ճառականներ , զինուորական
բարձրաստիճան սպաներ , քա-
ղաքային պաշտօնեաներ : Ժո-
ղովրդային հոծ բաղմութիւն մը
փողոցին երկու կողմերը գրաւած ,
այս սգալի հանգէսին կը մաս-
նակցէր :

Իշխանուհիին մարմինը փոփո-
խակի նուագածուներու խումբե-
րու , երգեցիկ միջազգային խում-
բի և լատին կղերին յուզիչ ե-
ղանակներուն հետ մէկտեղ յամր
յամր առաջնորդուեցաւ մինչեւ
եկեղեցի ուր կատարուեցաւ վեր-
ջին արարողութիւնները : Կը
լսենք թէ մէկ քանի օրեր իշ-
խանուհիին մարմինը ի տես պի-
տի դրուի հասարակութեան և
յետոյ պիտի ամփոփուի մասնա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՏԿԵՐ ՄԸ

ՊՈՒԿԱՐ ՀԱՅՊՈՒԿՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԷՆ (՝)

«Ազգային Դրօշակիւններու գինե-
տան» տէրը , նախկին աւագակապետ
Սթրանճան , պատրաստած էր արդէն
հայդուկներուն իր ամենօրեայ յա-
ճանորդներուն ճաշը , խաշած լու-
բիան և փանձր ու տաք շոգին կը
բարձրանալ յիւր ու ցան հազիւ կրա-
կէն զիջէր արձուած ամանին ըերնէն :
Միայն իրքերը կը պակսէին : Քանի
մը վայրկեան ետք առանձին կառ
զոյգ զոյգ սկսան ներս մտնել հետզ-
հետէ հնկալ մարդիկներ սոված զէմ-
քերով որոնց՝ բազմութեանն գինե-
տան բոլոր սեղանները գրաւուեցան :
Տարօրինակ ճաշ մը սկսաւ :
Շըրթուկներու բաղնուկէն ա-

ռաջ եկած ճանճարացուցիչ աղմուկը ,
ակոսներու անախօթ կճռուքները ,
կոկորդի կուտ ձայները որոնք կը
լսուէին կերակուրին կուլ տալու
արտաոց ձեւէն , եւ որոնց հետ կը
խառնուէր յաճախ տաք խօսակցու-
թեան մը բուռն գոռում գոչումները ,
հեռաւոր խուլ որոտումի մը տպա-
ւորութիւնը կը ձգէին այցելուին
վրայ :

Խօսակցութիւնը կը դառնար հա-
րուստ վաճառականի մը շուրջը ո-
րուն զրամարկը կտարած էին երեկ ,
մերթ ազգային ցեցերու եւ վաշխա-
նունետու կամ Մաշինէն նոր եկած
հարուստ թուրքի մը վրայ որ պէտք
է վերնար մէջնեղէն : Երբեմն ալ յի-
շատակութիւններ կը ըլլային անցիալ
տարի Պուլկարիոյ գաշտերուն մէջ
տեղի ունեցած արիւնալի կոիւնիւրէն
կամ աղաներու կատարած դաւաճա-
նութիւններէն ու հարստահարու-
թիւններէն :

Ամէնքն ալ , Պրչքովէն զատ , ե-
ռանդով կը մասնակցէին այս խօսակ-
ցութեան : Երբ քանի մը գաւաթ ալ
կուլ տուին Սթրանճանի թթու եւ

աժան գինիէն , խօսակցութիւնը ա-
ւելի տաքաւ , աչքերը բոցավառուե-
ցան , հայճոյանքները սկսան շտա-
նալ , սպառնալիքները կրկնուիլ ,
մանաւանդ երբ խօսք բացուեցաւ
յայտնի հարուստ Պուլկար աղայի մը
վրայ՝ սկսան զիրար ընդհատել ,
կանչուըտել և զրգուիլ :

— Եթէ այդ հաստփորը ուռած
տիկի մը նման չը պատուեմ , ինծի
թող Սթանչօ-Տէրէպէյի չըսեն , կը
պոտար կատաղի նայուածքով հսկայ
երիտասարդ մը արտակարգ կզակը
շարժելով :

— Խայտաստ՝ կը , կոտորած սանթիմ
մը անդամ չի տար . . . Թողոց որ
անօթութենէ մեռնինք : Մէյ մը
ձեռքս անցնէր , աղիքները դուրս
պիտի թափեմ , կըսէր օւրիշ մը
պատասաքողով սպառնալով :

— Նայէ՛ , ընդհատեց ուրիշ մը ,
պարո՛ն , դուն ալ աշխատէ , քիչ մը
քրտնէ եւ յետոյ ազաներու զէմ խօ-
սէ . . . Միթէ՛՞ աղաները դրամ
վաստակեցանիք թքօ-Մրովքաի գրպա-
նը լեցնելու համար :

Բէթքօ-Մրովքա գարմացած ես
գարձաւ զէպի այն մարդը , որ կը
յանդգնէր իր երեսին այդ խօսքերն
ըսել , ու գայրացած պատասխանեց .

— Ես աշխատած ու քրտնած եմ
Պալքանի մէջ , աղգիս ծառայելով եւ
արիւնս ալ թափած եմ . . . իսկ դու
այն աստիճան պակսիմաթ կը ծախէիր :

Առաջինը բորբոքեցաւ այս խօս-
քին վրայ և գաւաթը մինչեւ յա-
տակը քամիւրով պատասխանեց .

— Սեպեմք թէ ծախած ըլլամ , այդ
քու գործդ չէ , բայց եթէ կուզես
ցոյց տամ ոտքիս վէրքերը . միայն
դու չես կոուրի գնացողը , ուրիշ
կոուրդներ քեզ նման աղմուկ չեն
հաներ :

(՝) Թարգմ. վազովի Ոչ Սիրելի Ոչ
Համեղի վէպէն :

«Սվոյոտա» թերթին :

տորապէս պատրաստուած գերեզմանի մը մէջ :

Արարողութենէն յետոյ, փառաւոր զօրահանգէս մը կատարուեցաւ : Բազմաթիւ ձիաւոր, հետեւակ և թնդանօթաձիգ զօրքեր անցան իշխանին առջեւէն, թընդանօթի հարկեր մէկ հարուածներ թնդապուրի օղջ :

Ծղանակը շատ փայլուն էր : Անկարգութիւն կամ չփոթութիւն չը պատահեցաւ երբեք : Ժողովորդը տիրութեամբ համակուած, հետեւեցաւ թափորին ամենայն երկիւղածութեամբ : Համակրական բազում ցոյցեր եղան վաղամեռիկ անյուզական իշխանուհոյն համար :

Բոլոր զուարճութեանց վայրերը զոյց էին : Արտաշէս քաղաքը տակաւին երկար ժամանակ սուգի մէջ պիտի մնայ :

Պրայիլա, 24 Յունիվ.

«Նարժումի» ընթերցողները շատ դառնացան, արգարեւ, Ռուսական և մասնաւորապէս Պրայիլայի գործերով : Բայց կը յուսանք թէ այդ գրուածքները իրենց օգուտն ունեցան, և Ռուսական հայտարարը սկսաւ վերակենդանութեան նշաններ ցոյց տալ :

Քաղաքի մէջ ընթերցարանը կը յարատեւէ իր գոյութիւնը : Բազմաթիւ նուէրներ ընդունուած են լանաղան կողմերէ : Իսկ գոյացած հասոյթներով յանձնախումբը կաշխատի Ալիշանի, Բաֆիի և ուրիշ հոյակապ հեղինակներու գործերը բերել տալու :

Ընթերցատիրաց ընկերութիւնն ալ իր ընդարձակ ծրագրին գործադրութեան մէջ, կառավարութեան կողմէ դժուարութեանց բաղխելով, անվատ նոր միջոցներու կը դիմէ : Գովելի են այս անձնուէր պարուններուն ջանքերն ու զոհողութիւնները :

զորս կը գործադրեն իրենց առաջադրած նպատակին իրակաւնացման համար :

Այսպէս, ընթերցարանի յանձնախումբը նամակով մը խնդրած է տեղւոյն առկայ անհատներով փարչութենէն, որ կառավարութեանէն փախուցուած է, վերստին իրենց պաշտօնն ստանձնել և այս առթիւ ծրագիր մը ներկայացուցած, որուն համեմատ անհատներու մասնաւոր երաշխարութեամբ միջոցներ պիտի հայթայթէ այն բոլոր ազգայիններուն որոնք պզտիկ գրամագլխի մը պակասին պատճառով թուրքեան դատապարտուած են. ամէն կերպով պիտի աշխատի օգնել անպաշտպան, անկարող ազգայիններուն, տարեկան դուրմար մը յատկացնել քաղաքիս հիւանդանոցին, որպէս զի առանց ու է դժուարութեան ընդունին ազգատախտի մին յանձնարարած հայ հիւանդները, վերջապէս ամէն զոհողութիւն կատարել հայ տարրին բարոյական զարգացման նպատակով համար, ու նախ աշխատիլ բացուած «Հայկազեան անդամիկ ընթերցարանը» միշտ բարգաւաճ ու ճոխ պահելու :

Կը յուսանք թէ պահուստներու անտարբերութենէն յուսահատելով ետ քաշուած ազգատախտի մը, պիտի քաջալերուի այն հրաւերէն ու պիտի չը զլանայ իր աշխցութիւնը :

Ուրախ ենք որ կալաց և ուրիշ տեղեր ալ սկսած են շարժումներ կատարել, ընկերութիւններ կազմակերպել և ընթերցարան բանալ :

—Պոլսեցի հարուստ ազգային մը որ վաղուց Պրայիլա հաստատուած էր, և երկու հարուստ հրէաներու ընկերակցութեամբ ճաշարան մը բացած է, ուր պիտի կրնան կէս արժողութեամբ ճաշել այն բոլոր հայերը որոնք

«աղքատութիւն» ընդունելով հոն մտնել յանձն կառնեն : Նաև զեղարան մը բացեր են ուր ժամը 8—11 բժիշկները ձրի ազքատ հիւանդներ կը դարմանեն և ձրի տեղ կը մատակարարեն :

Այս ազգատախտ ազգայիններուն իր տեսակին մէջ նոր ձեռնարկը խիստ օրինակելի է և արժանի ամէն համակրութեան :
ԽԵՁՕ

ՏՕՔԵՏՈՐ Յ. Ս. ՓՈՓՈԱԶԵԱՆ
ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
ՎԿԱՅԵԱԼ ԲԱՐՁՔԻ ԱՏԱՄՆԱԲՈՒՍՎԱՆ
ՎԱՐՁՈՒՄՆԵՆ

Հիւանդ կրնայունի ամեն օր առաւօտեան ժամը 9 և 11-ը երեկոյեան 5 իր բնակարանին մէջ Տրախոսան փողոց, 1206, Մուսալլա :
ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ ՄԻՆՁԵՒ ԿԷՍ ՕՐ

ՔՐՈՆՆԻԿ

Անցեալ կիրակի Պոլսոյ Մայր եկեղեցիին մէջ Նուպար փաշաի հոգեհանգիստը կատարուել է : Արարողութեանց ներկայ գըտնուել են բազմաթիւ բարձրաստիճան անձնաւորութիւններ, Յունաց պատրիարքին ներկայացուցիչները, բողոքականաց ազգայեցիք և ուրիշ օտարականներ : Հռոմէական ազգայիններու կողմէն միայն ներկայացուցիչ չը կար, որովհետեւ կրօնապէս ներկի չէ անոնց հայ եկեղեցոյ արարողութեանց մասնակցիլ : Ս. Պատրիարքը պատարագ մատուցել է և քարոզ խօսեր :

Արարողութիւններէ ետք ընդունելութիւնները տեղի ունեցել են որոնց միջոցին համակրական արտայայտութեանց փոխանակութիւններ եղած են յոյն և հայ եկեղեցիներու ներկայացուցիչներու միջեւ :

—Վանէն եկած լուրերը շատ դառն են : Սովը հեռագրեալ սկըսած է սաստկանալ, վերջերս միայն 17 հոգի մեռած են անօթութենէ : Միւս կողմէ պապականներու շահատակութիւնները չափ ու սահմանը անցած են այլ եւս : Բէր տը Փրանս, ասօնիկիկեաններու գլխաւորը, կրօնական հրապարակ մը բացած է, և դաւանափոխութեան պայմանին ներքեւ, կարօտեալներու նպաստ կը բաշխէ : Արդեօ՞ք Ֆրանսացի ժողովուրդը կը ներքէ՞ որ իր դրամով հարստահարուած անձերու հողիները գնուին :

Կը լսենք թէ այս շաբթու Ս. Պատրիարքը բաւական կարեւոր գումար մը զրկած է Վանի սովեալներուն ի նպաստ : Նաեւ տեղական յանձնախումբ մը կազմուած է սովեալներուն ուստես բաշխելու համար :

—Նուպար փաշայի կտակին լուրը տակաւին չէ ստուգուած : Զանազան տարածայնութիւններ կը շրջին այդ մասին : Կըսուի թէ Բարիլի հայոց եկեղեցոյն շինութեան համար 50,000 ֆրանք միայն կտակած է : Կը սպասենք որ Նուպարեան ընտանիքը պաշտօնական յայտարարութիւն ընէ :

—Նուպար փաշայի մարմինը Ա. զէքսանդրիա փոխադրուած է : Եգիպտական կառավարութիւնը ամէն ջանք կատարած է որ թաման հանդէսը արժանավայել չըքեղութեամբ կատարուի : Նուպար փաշայի մարմինը առժամապէս պիտի ամփոփուի Ազէքսանդրիոյ եկեղեցոյն կից, իր եղբոր Առաքել պէյի գերեզմանին քով :

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Տ. Խաչեր Բողեան, Սեբաստիոյ Թաղնուս գիւղացի, մեր մօտ նամակ մը ունիք :

—)(—

—Ամէնքն ալ մորթենք, պոռագին զանազան ձայներ :

—Սատկի՛ն աղաները, կեցցէ՛ ազգը :

—Կեցցէ՛ քօմիւնան (համայնքը), գոչեց Մակեդոնսկին ու բոուսեցքով ուժով սեղանին զարկալ :

Այդ ատենները «քօմիւնա» բառը նոր «մօտա» էր :

Եւ սակայն աժան գիւնոյ բաժակները շարունակ կը պարպուէին եւ աղմուկը կը սաստկանար : Աղաներու պաշտպան երկու անձերը խօսքի կռուէն գործնականին անցած էին բազմութեան մնացած մասն ալ կըրուի խառնուեցաւ, ոմանք Տիմիթրիի վրայ յարձակեցան, որ կոտոր ինզղուող շան մը պէս, ոմանք ալ պարզ զժողութիւն կը յայտնէին, առանց ու եւ է մասնակցութեան :

—Դու՛րս, դու՛րս, կը պոռային շատ ձայներ :

—Դու՛րս, աղաներու բարեկամը կը կրկնէին շատերը : Յանկարծ քանի մը հո՛սիւս ձեռքեր բռնեցին շարժարած եւ ուժասպառ Տիմիթրէն, փողոց նետելու գիտաւորութեամբ :

—Պիտի զարնե՛մ, թող՛ք որոտաց Տիմիթրէն խկոյն իր վեցհարուածեանը հանելով :

Այս տեսարանը գուցէ աւելի աղէտարեր ըլլար, եթէ զինեաան տէրը, Սթրանձան, չի միջամտէր :

—Կեցցէ՛ք, թող՛ք Տիմիթրէն, պոռաց յանկարծ ու հրեց կատաղած հայրուկները :

—Կաւաճա՛ն է ան, գոչեց Մրավքան :

—Չէ՛, ըսաւ Սթրանձան :

—Հապա ի՛նչ է :

—Ազգային, ձեզի՛նման, ես զանի տեսած եմ կոտի մէջ... Կտրիճ է... Իրաւունք չունիք :

—Սթրանձան, գոռաց հաճին, ուրեմն ըսել կուզես թէ յանցաւորը մենք ենք ու ան իրաւունք ունի՛... Մենք, կը հասկնանք, դատաւոր չենք ուզեր :

—Դուք ալ իրաւունք ունիք, որովհետեւ դուք ալ ազգատ, անարդուած տանջուողներ էք, ինչպէս ես, բարկանալու ալ իրաւունք ունիք :

Այս խօսքերը խկոյն հանդարտեցուցին կատաղած հայրուկները :

—Կեցցէ՛ Սթրանձան, մեր քաջ գրօշակիրը, գոչեց Մակեդոնսկին իր գաւաթը վերցնելով :

—Կեցցէ՛, գոռացին ամէնքն ալ եւ գաւաթները իրար զարկին :

Սթրանձան յուզուած, գողողուն ձեռքով վերցուց գաւաթը եւ սկսաւ խօսիլ :

—Շնորհակալ եմ, սիրելի եղբայրներ, ձեր ըրած պատիւն համար : Զեղ հետ գտնուելէ աւելի մեծ ուրախութիւն մը չը կայ ինձի համար : Ազգը միշտ պիտի յիշէ մեր փառաւոր կրիւնները մեր գերի հայրենիքին, Պուլկարիոյ պատման համար մղուած : Այդ կրիւնները ազգը արթնցուցին եւ անոր սիրտը անկախութեան տենչով լեցուցին : Բայց պիտի ըսէք, ո՞վ է մեզ պատուողը, ո՞վ է մեզ ճանչցողը... : Հանդարտեցէ՛ք, Մենք մարդ ենք, եւ պուլկար մարդ, կատարեցինք մեր սրտի պարտքը զէպի մեր հայրենիքը, աւելի ոչինչ : Ուրիշ ի՛նչ բան պէտք է մեզի : Դրա՞մ... Զենք ուզեր, դրամի համար չէր սրարիւն թափեցինք, որովհետեւ մեր արիւնը աւելի թանկ է քան Ռու-

մանիոյ հարուստներու բոլոր գանձերը : Կալուած ու հարսութիւն կուզե՞նք... Զէ : Հարստութեան պէտք չունինք, քանի որ մեր ունեցածը յօժար կամքով լքեցինք ու զոհեցինք Պուլկարիոյ ազատութեան համար : Իսկապէս, շատ դժուար է քաղցած, սոված օտար երկիրներու մէջ թափառել, ոչ սիրելի և ոչ հաճելի ըլլալ մեկուկ : Դժուար է մասնաւորապէս ինձի համար որ ստիպուած եմ, ծերացած սկրններովս ու անտաւոր կուրծքովս, այս մանր մուկ տնային գործերով զբաղիլ : Ես, որ երբեմն սուր կը բռնէի եւ առիւծի դրօշակ կը կրէի, ու հիմա զգալ կը բռնեմ միայն : Ա՛խ, սիրելի եղբայրներ խոփած մամիկներ դարձանք... :

Հոս Սթրանձան սաստիկ յուզուեցաւ, իր ճառը ընդհատեց, սեղանին վրայ դրաւ իր լեցուն գաւաթը, հանեց աղտէն սեւցած թաշկինակը եւ սկսաւ սրիւն ալտերէն վար հոսող արցունքները... :

Ամէնքն ալ լուռ ոտքի վրայ էին : ԹարգՎ. Պ. ՍԻՐԵՄՁԱՆԸ (Շարունակելի)

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

Թ Ո Ւ Բ Ք Ի Ա

Իրէքի մէջ տեղի ունեցած ալպանական ժողովին մասնակցած են 500 հոգի: Երկու թուղթ ստորագրուած է: Արտումները գաղտնի կը պահուին թէև, բայց երկրորդ թուղթի մասին սա յայտնի է թէ, ալպանացիք պարտաւոր պիտի ըլլան Մակեթոնիոյ մէջ տեղի ունենալիք ապստամբութեան մը առեւն 17.20 հազար զօրք տալ, ալպան պետերու հրամատարութեան տակ: Իսկ ընդհ, պատերազմի մը ժամանակ մինչև 200.000 զօրք պիտի հանեն: Ժողովին նախագահը Մուլա Ջէքի հաղորդեց թէ պատերազմի ժամանակ Մուլթանը երեք օրուան մէջ մեծ քանակութեամբ զէնքեր պատրաստ պիտի ունենայ Վէլբոլիչի, Վուցիչէի և Միթրոլիցի մէջ:

Մուլթանին այս ձեռնարկը վատ սպասարարութիւն ձգած է եւրոպական տէրութեանց վրայ, որուն պատճառաւ ալպանական ժողովը անմիջապէս փակուած է և Պոլսոյ պաշտօնական թերթերը սկսած են գէշ խօսիլ անոր մասին:

Թուրք կառավարութիւնը, հակառակ Պուլկար կառավարութեան Մակեթոնիոյ հանդարտութեան մասին ցոյց տուած ապահովութեան որոշած է 34—44,000 հասցնել Մակեթոնիոյ շինուորական զօրութիւնը:

Սերպիացիի մը սպանման առթիւ Բրիլէքի մէջ տեղի ունեցած են արիւնահեղ ընդհարումներ սերպերու և պուլկարներու միջև: Թուրք մը և Պուլկար մը սպաննուած են և երկու Պուլկար վիրաւորուած: Կառավարութիւնը բազմաթիւ ձերբակալութիւններ կատարած է:

Դէպքը հետեւեալ պարագաներու մէջ տեղի ունեցած է. Սրպ լրտես մը փողոցին մէջ կը սպաննուի կացինի հարուածով: Լըրտեսին հետեւող երկու տաճիկ պահապանները սպաննուի վրայ կը յարձակին և զայն կը մեղցնեն: Այն առեւն ամբար տաճիկ պահապանները կտոր կտոր կընէ: Պահապանները շարդողները տակաւին գտնուած չեն:

Սամս կղզւոյն վարչական ժողովի նախագահը և շատ մը ժողովականներ հեռագրով տըրտունջ յայտնած են Մեծ եպարքոսին կղզւոյն կառավարիչ Միւղիւրիս փաշայի դէմ և անոր հրաժարումը պահանջած:

«Տէյլի Բրոնիքի» խիստ ապահով աղբիւրներէ կիմանայ թէ Մակեթոնիոյ բոլոր քրիստոնեայ տարրերուն մէջ գաղտնի համաձայնութիւն մը գոյացած է յառաջիկայ գարնան թուրք բռնակալութեան դէմ ապստամբելու համար: Մակեթոնացւոց պիտի աջակցին նաև քրիստոնեայ սլ-

պանացիք որոնք կը մերժեն իրենց զէնքերը կառավարութեան յանձնել:

Պոլսէն «Տէյլի Մէյլ» թերթին քաջուած հեռագիր մը կըսէ թէ Մակեթոնական խլրտումները թուրքերու վրայ այն սպասարարութիւնը թողած են թէ, աւսնց պատճառը անգլիական կառավարութիւնն է լսի: Քաղաքական շրջանակներու մէջ համաշխուած են թէ Անգլիոյ նպատակն է Ռուսիան զրգուիլ որ ձգէ իր պահպանողական ընթացքը և սկսի սղառնալ թուրքիոյ դէմ, որպէսզի այս խառնակութենէն ինքն ալ յառաջի որոտիլ:

Սուլթանին անձնական տրակարութեան պատճառաւ, Ֆրանսական նոր դեսպան Պ. Բոնիսմանի պաշտօնական ընդունելութիւնը յետաձգուած է:

Կրտուի թէ 30 թուրք սպաներ գերման բանակին մէջ ծառայութեան պիտի ընդունուին:

Սուլթանի, Պիթոլիսի և Ահօբիսի կուսակալները երկրին քրիստոնեայ ազգաբնակիչներուն յայտարարութիւն մը բրած են, հրախրելով յանձնել իրենց բոլոր զէնքերը: Ասոր փոխարէն Սուլթանը կը խոստանայ քրիստոնեաներու գոյքի, կանքի և պատուի սպահովութիւն: Յայտարարութիւնը կը հաղորդէ թէ 50—150 տճկ. ոսկի պիտի ուղարուի այն մարդոց որոնք իշխանութեան իմաց կատան գաղտնի գործիքներու մասնակցող կամ պետութեան դէմ դաւադրութիւններ սարքող սաճկահպատակ կամ օտարահպատակ անձներու անունները: Ասկից զատ Մակեթոնիոյ քաղաքական և շինուորական իշխանութիւնները գաղտնի օտարակալութիւն մը կազմակերպած են, յեղափոխական ընկերութեանց անդամները գտնելու նպատակաւ: Այս ամէնը ցոյց կուտան թէ Մակեթոնիոյ մէջ թերթի շրջան մը սկսած է բացուիլ:

ՅԻՒՊՊԵԱՆ ԿՂՁԻՔ

Ամերիկեան աղբիւրներէ հասած տեղեկութեանց համեմատ կատարել կուր մը կը շարունակուի Ամերիկայի և կղզեցիներուն միջև: Ապստամբները 20,000 հոգի չափ, իրենց ուժը կեդրոնացուցած էին Մանիլայի շրջակայքը, զինուած բազմաթիւ Գրոբի թնթանութեանը և ամենանոր տեսակէ Մուլթերեան հրացաններով: Ամերիկացիք երկու թնդանութիւն և բազմաթիւ հրացաններ գրաւած են: Ապստամբներու թնդանութիւնը Սպանիացի գերիներ կը վտրէին:

Ամերիկացւոց կորուստը կը հաշուուի 200 հոգի: Ապստամբներէն 500 հոգի գերի բռնուած են և 500 սպաննուած: Քաղաքին

շուրի ճամբաները ամերիկացիք կարած են:

Մարքիսէյ խորհրդակցութիւն մը կատարելով ցամաքային և ծովային իշխանութեանց հետ, որոշեց է կուր բոլոր ուժով առաջ տանիլ ապստամբ կղզեցիները հանդարտեցնելու համար: Այս իմաստով հրահանգ զրկած է Օթիս հրամանատարին:

Օթիս հրամանատարը ձերակոյտին հեռագիր մը զրկած է ուր բանակին վիճակին վրայ տեղեկութիւն տալով կըսէ թէ, 220 մահեր պատահած են, որոնց 40ը զանազան զիպուածներէ, 65ը թիֆօէ, 43ը ծայրիկէ, 22ը փորհարութենէ և 50ը զանազան հիւանդութիւններէ: Ամէն միջոց ձեռք առնուած է համաճարակին տարածումը արգելելու համար:

Հոնկ-Քոնկի Փիլիպպեան կոմիթէն յայտարարած է թէ կղզեցւոց արտունջի պատճառն է Ամերիկացւոց սոսակական տուրքերու յաւելումը: Սպանիական կառավարութեան օրով մարդկուի 2—37 տօլար կը վճարեն եզեր մինչդեռ հիմայ 5—100 տօլար:

Կղզեցւոց պատուիրակը, Ակոնսիօ, Վաշինկթընէն մեկնած է: Մեկնումէն առաջ նոր ծանուցագիր մը զրկել է ամերիկեան կառավարութեան ուր կը բողոքէ այս վերջինին Փիլիպպեաններու վրայ ունեւալիք գերիշխանութեան իրատեսքին դէմ: Ակոնսիօ սճապարանօք մեկնած ըլլալով, իր գոյքերն ու թուղթերը նիւնորք մոռցած է:

Սպանիական կառավարութիւնը ոչ մէկ պաշտօնական հեռագիր ստացած չըլլալով ամերիկացւոց և կղզեցւոց մէջ սկսած թշնամական յարաբերութեանց մասին, որոշած է ամենազգոյշ կերպով վարուիլ, խղճմտօրէն յարգելով Քոնկի վերջին դաշնագրութիւնը:

Ք Ո Ւ Պ Ա

Ամերիկեան կառավարութիւնը առաջարկած է Քուպայի իշխանութեանց երեք միլիոն տօլար վճարել, իրենց զինուորները արձակելու համար: Պաշտօնեայ մը զրկուել է քննելու համար թէ քուպայիք պիտի գահանան այդ զուժարով: Կառավարութեան ստացած տեղեկութեանց համաձայն 30,000 անձ պէտք է վճարում ընդունին: Քուպայիք առնուազն 30 միլիոն տօլար կը պահանջեն:

Սպաները մերժած ըլլալով ամերիկացւոց առաջարկը, կառավարութիւնը միաք ունի մինչև 16 միլիոն տօլարի բարձրացնել: Քուպայիք կը զգան թէ այս կարգադրութեան հետեւեալը պիտի ըլլայ Ամերիկացւոց սիրապետութեան երկարումը: Բայց որովհետև քուպայիք մեծ փառք կը զգան կղզւոյն բանակը

արձակուած տնտեսու, ամերիկացիք կաշխատին օգտուիլ այս բնակչաց արամագրութենէն յաջող բանակցութեան մը սկսելու համար:

Բանակին արձակուելէն ետք, զինուորական արդի բէթիմին տեղ, քաղաքային նոր բէթիմ մը պիտի հաստատուի:

ՊՕՐՍԱ

Վառնա 3 Փետրուար

ՊՈՒՂՏԱՅ

Table with 2 columns: Item name and price. Includes 'Վազոն', 'Արագա', 'ՍՐԲԱ' with prices in 'Կէքթօլ' and 'Ֆրանք'.

ՍՐԲԱ

Table with 2 columns: Item name and price. Includes 'Լիպրա' with prices in 'Կէքթօլ' and 'Ֆրանք'.

ՄԻՍԻՐ

Table with 2 columns: Item name and price. Includes 'Վազոն', 'Առապա', 'Կիւնկէ' with prices in 'Կէքթօլ' and 'Ֆրանք'.

ՏԱՐԻ

Table with 2 columns: Item name and price. Includes 'Կիւնկէ', 'Առապա մուսկէլիսի' with prices in 'Կէքթօլ' and 'Ֆրանք'.

ՄԵԼԻՍԵՆԵԿ ԵՊՕ. ՄՈՒՐԱՏԵԱՆՑ

Պատուիրակ Քրիստոնեական Եկեղեցւոյ

ԿԱԼԻՑ

Տպարան «Արիւ» 1898

Գին 3.50 Ֆրանք

Կը ծախուի Կ. Պոլսի Պ. Պալեւից գրատան և Յօքչանի (Ռուսմանիա) Վ. Մամիկոնեանի մօտ:

Advertisement for 'ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ Օ. ԲԱՐՍԵՂԵԱՆԻ' with details about printing and contact information.

Advertisement for 'ՈՒՃԱԴՐՈՒԹԻՒՆ' featuring an image of a boot and text about footwear.

Отговорникъ: А. СУКЯСОВЪ

Печатница „Взаимность“ Варна.